Ա. Ն. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐԸ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՃՆՇՎԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

50-ամյակի բարձունքից մի հայացք գցելով Հոկտեմբերի նախօրյակին Ռուսական կայսրության հպատակ ազգերի սոցիալ-քաղաքական վիճակին և նրանց ժամանակակից կյանքի պատկերին, ավելի ցայտունորեն ենք տեսնում սոցիալիստական հեղափոխության լախտորոշ նշանակությունն այդ ազգերի ճակատագրի համար։

Հոկտեմբերյան հեղափոխության նախօրյակին Ռուսական կայսրության ամբողջ ազգաբնակչության մեջ վելիկոռուսները կազմում էին մոտ 40, իսկ հպատակ ազգերը՝ 60 տոկոս։ Լենինը քանիցս անդրադարձել է այդ տվյալներին, վերլուծել ազգային հարաբերությունները, ընդգծել է, որ Ռուսաստանը ժողովուրդների բանտ էր, որ այնտեղ ցարական-մեծապետական բռնակալություն վարում է ոչ ռուս ազգերի ճնշման, հարստահարման և բռնի ձուլման քաղաքականություն։ Նշելով բանվոր դասակարգի սոցիալիստական ազատագրական հեղափոխական պայքարի վճռական նշանակությունը և առաջնային գերը հեղափոխության մեջ, Լենինը միաժամանակ, 1917 թ. հոկտեմբերի կեսերին՝ բոլշևիկների կողմից իշխանությունը գրավելու նախօրյակին հայտարարեց, որ ազգային և ագրարային հարցերը ներկայումս օրվա արմատական հարցերն են *Ռուսաստանի բնակչության մանրբուրժուական մասսաների համար։ Այս անվիճելի է։ Այս երկու հարցերում էլ պրոլետարիատը մեկուսացված չէ, նրա կողմն է ժողովրդի մեծամասնությունը։* «Մենակ նա է, որ ընդունակ է վարելու այդպիսի վճռական, իրոք «հեղափոխական-դեմոկրատական» քաղաքականություն այդ երկու հարցերում»[1]։ *Հպատակ ազգերի ազատագրման, նրանց սոցիալական ազգային հարցերի տեղի ու նշանակության լենինյան բնութագրությունը ելակետ հանդիսացավ Հոկտեմբերին հաղթանակած սոցիալիստական հեղափոխության ազգային քաղաքականության սկզբունքները հռչակելու և հաստատելու գործում։*

Հոկտեմբերի 25-ին սովետների համառուսաստանյան համագումարը, որը հանդիսացավ սովետական պետության հիմնադիր բարձրագույն ֆորումը, նույն օրը ընդունեց իր առաջին պատմական փաստաթուղթը՝ դիմում բանվորներին, զինվորներին և գյուղացիներին, հայտնելով բուրժուազիայի իշխանությունը տապալելու և երկրի կառավարման իշխանությունն իր ձեռքը վերցնելու մասին, նրա ներքին և արտաքին քաղաքականության գլխավոր սկզբունքների մասին։ Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիայի նախագիծը կազմվեց հոկտեմբերի 28-ին և ներկայացվեց կառավարությանը սովետական իշխանության հաստատման երրորդ օրը։ Դեկլարացիան մանրա-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 102 (ընդգծումը մերն է)։

կրկիտ քննվեց և ժողկոմսովետի կողմից ընդունվեց 1917 թ. նոյեմբերի 2-ին[2]։ Դեկլարացիան սահմանեց, որ ազգային թշնամանքի և փոխադարձ անվստահության քաղաքականությանը վերջ է արվում, նրա փոխարեն հաստատվում է Ռուսաստանի ժողովուրդների փոխադարձ լիակատար վստահության քաղաքականություն, ազգերի կամավոր և աղնիվ միության քաղաքականություն։ Ժողովրդական կոմիսարների սովետը հայտարարեց, որ ազգային հարաբերությունների ասպարեզում նա իր գործունեության հիմքում դնում է հետևյալ սկզբունքները.

1. Ռուսաստանի ժողովուրդների իրավահավասարություն և սուվերենություն.

2. Ռուսաստանի ժողովուրդների ազատ ինքնորոշում, ընդհուպ մինչև անջատման և ինքնուրույն պետություն կազմելու իրավունք.

3. Ազգային ու ազգային-կրոնական ամեն տեսակի արտոնությունների և սահմանափակումների վերացում.

4. Ռուսաստանի տերիտորիայում ապրող բոլոր ազգային փոքրամասնությունների և էթնիկական խմբերի ազատ զարգացում[3]։

Դեկլարացիան հավանության արժանացավ կուսակցության վերադաս օրգանների կողմից, համառուսական Կենտգործկոմում և տեղական բոլոր սովետներում։ Բազմամիլիոն բազմազգ ժողովուրդները ողջունեցին այդ մեծ ակտը, տոգորվեցին նրա վեհ գաղափարներով։ Այսպիսով, ազգային հարցի այն սկզբունքները, որոնք Լենինը մշակել և տեսականորեն հիմնավորել էր հեղափոխությունից առաջ, Ժողկոմսովետի դեկլարացիայի մեջ իրավական ուժ ստացան և դարձան պետական քաղաքականության ելակետային սկզբունքներ, որոնք հետագայում ավելի զարգացան և ծավալվեցին հեղափոխական իշխանության նոր ակտերի մեջ։

Այդպիսի հիմնական ակտերից մեկն էլ հանդիսացավ «Աշխատավոր և շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիան», որը գրեց Լենինը 1917 թ. վերջերին և 1918 թ. սկզբներին։ Հունվարի 3-ին դեկլարացիան քննվեց և ընդունվեց համառուսական Կենտգործկոմի նիստում[4], այնուհետև հրապարակվեց մամուլում[5]։ Հունվարի 5-ին Սահմանադիր ժողովի առաջին նիստում Յա. Մ. Սվերդլովը կարդաց այդ դեկլարացիան, այն որպես Սահմանադիր ժողովի որոշում և սահմանադրության հիմք ընդունելու, նրա հիման վրա գործունեություն ծավալելու համար։ Սահմանադիր ժողովի մեծամասնությունը լինելով մենշևիկ, էսեռ, կադետ և այլ հակահեղափոխական տարրերից, մերժեց Լենինի կազմած և Կենտգործկոմի հավանությանն արժանացած դեկլարացիան։ Սահմանադիր ժողովում ընտրված բուրժուական և մանրբուրժուական տարրերը չհամաձայնվեցին սովետական իշխանության քաղաքականության հիմնական սկզբունքների հետ, մերժեցին ազգերի անկախության և նրանց պետականության կազմավորման հարցադրման հետ, փաստորեն կանգնեցին հին ցարական ազգային ճնշումների քաղաքականությունը շարունակելու տեսակետի վրա։ Սահմանադիր ժողովը ցրվեց։ Ժողովուրդների իրավունքների դեկ-

---

[2] ЦГАОР, ф. 1318, оп. 1. д. 25, л. 1—15.
[3] «Правда», 3 ноября, 1917.
[4] См. ЦГАОР, ф. 1318, оп. 1, д. 25, лл. 1—20.
[5] Տե՛ս «Պրավդա» թերթը, 4 հունվարի 1918։

լարացիան ներկայացվեց սովետների համառուսաստանյան 3-րդ համագումարին, որը բացվեց 1918 թ. հունվարի 10-ին։ Այդ համագումարին ներկայացել էին 707 պատգամավոր՝ ընտրված 317 սովետների և 110 զինվորական կոմիտեների կողմից։ Շուտով սովետների 3-րդ համառուսաստանյան համագումարի մեջ ձուլվեց նաև այդ օրերին տեղի ունեցող գյուղացիական պատգամավորների համագումարը։ Նրա 250 պատվիրակները դարձան սովետների 3-րդ համագումարի պատգամավորներ։ Այսպիսով, սովետների 3-րդ համառուսաստանյան համագումարը երկրի բազմազգ ժողովուրդների ամենալայն զանգվածների կողմից ընտրված մի իսկական ներկայացուցչական օրգան էր, որին մասնակցում էին մոտ 1000 մարդ։ Այդ համագումարը միահամուռ կերպով հավանություն տվեց «Աշխատավոր ու շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիային», այն հայտարարվեց որպես հիմնական օրենք և գրվեց հետագայում կազմված սովետական առաջին սահմանադրության հիմքում։ Դեկլարացիայի 1-ին հոդվածում ասված է, որ «Ռուսաստանի սովետական հանրապետությունը հիմնվում է ազատ ազգերի ազատ միության հիմունքով, իբրև սովետական ազգային հանրապետությունների ֆեդերացիա»[6]։ Այնուհետև, համագումարի որոշումը ասում էր, որ Ռուսաստանի բոլոր ազգերի աշխատավոր դասակարգերի իսկապես ազատ ու կամավոր միություն ստեղծելու նպատակով, սահմանվում են ֆեդերատիվ հանրապետության միայն հիմնական սկզբունքները, իսկ յուրանքանչյուր ազգի բանվորներին ու գյուղացիներին է թողնվում, որ նրանք իրենց համագումարներում ինքնուրույնաբար որոշեն իրենց ազգային պետականության, անկախության կամ ֆեդերատիվ հանրապետության մեջ միանալու հարցերը։

Սովետների 3-րդ համառուսաստանյան համագումարը հիշեցրեց ցարական Ռուսաստանում կիրառվող ոչ ռուս ազգերի «բռնի ռուսացման քաղաքականության» մասին, հպատակ ազգերի «մայրենի լեզվի արգելման, ջարդերի ու հալածանքների» մասին, խնդիր դրեց իսպառ արմատախիլ անել նման երևույթների բոլոր արտահայտությունները։ Համագումարը հաստատեց ժողովրդական կոմիսարների սովետի հռչակած բոլոր ակտերը, որոնց մեջ կոնկրետ ձևակերպված էին առանձին երկրների ու ազգերի լիակատար անկախության և նրանց ազգային պետական կազմավորման հարցերը։ Համագումարը բացի դեկլարացիան հաստատելուց, նաև առանձին որոշում ընդունեց ազգային հարցի մասին։ Այդ որոշման մեջ ասված է. «Համագումարը ամբողջովին ընդունում է և ողջունում ժողովրդական կոմիսարների սովետի քաղաքականությունն ազգային հարցում, որն ուղղված է ժողովուրդների ինքնորոշման բակրզբունքը կյանքում իրականացնելու խնդրին... Համագումարը մասնավորապես հաստատում է ժողովրդական կոմիսարների սովետի և Կենտգործկոմի դեկրետները Ֆինլանդիայի և Հայաստանի մասին։ Համագումարն իր խորը համոզմունքն է հայտնում այն բանում, որ սովետական իշխանության հետագա քայլերն այդ ուղղությամբ կնպաստեն ազգերին բռնի կերպով իր կազմում պահող հին Ռուսական կայսրությունը դարձնելու սովետական հանրապետությունների եղբայրական, կամավոր հիմունքներով միավորված, ֆեդերատիվ միություն»[7]։

---

6 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 26, էջ 517։

7 «Газета Временного Рабоче-крестьянского правительства» от 18 января, 1918

Ազգային հարցի մասին սովետների համառուսաստանյան 3-րդ համագումարի ընդունած որոշումները հիմք հանդիսացան Ռուսաստանի Սովետական Հանրապետության հիմնական օրենքի, առաջին սահմանադրության համար, որն ընդունվեց սովետների համառուսաստանյան 5-րդ համագումարում, 1918 թ. հուլիսի 10-ին։ Այդ սահմանադրության նախագծերի համագումարից առաջ տեղի ունեցած քննարկումների նյութերը ցույց են տալիս, թե ինչպիսի մեծ հոգատարությամբ Լենինը հետևում էր ազգային հարցի հիմնական ըսկզբունքների մշակմանն ու հաստատմանը[8]։ Սահմանադրության առաջին բաժնի առաջին գլխում ասված է. «Ռուսաստանի Սովետական Հանրապետությունը հաստատվում է ազատ ազգությունների ազատ միության հիմունքով, իբրև սովետական ազգային հանրապետությունների ֆեդերացիա»[9]։ Սահմանադրության մեջ այնուհետև ընդգծված է, թե Ռուսաստանի տարբեր ազգերի ամուր դաշինքի համար, այնտեղ ձևակերպված են միայն ազգային քաղաքականության հիմնական հարցերը, իրավունք վերապահելով յուրաքանչյուր ազգի աշխատավորներին, որ նրանք իրենք որոշեն ֆեդերացիային մասնակցելու հիմունքները, կազմելու ավտոնոմ հանրապետություններ կամ մարզեր։ Ռուսաստանի Սովետական Հանրապետության մեջ ազգային հարցում կիրառվող այդ քաղաքականությունն օրինակ ծառայեց նաև այն անկախ կամ ինքնուրույն սովետական հանրապետությունների համար, որոնք չէին մտնում ՌՍՖՍՀ-ի մեջ և նրա հետ կապված էին իրավահավասարության դաշինքով։

Հեղափոխության գլխավոր ակտերն ազգային հարցում 1917 թ. վերջերին և 1918 թ. մեկ անգամից վերջ դրին այն ճնշումներին, բռնություններին և խըտրականությանը, որոնք գործադրվում էին երկրի բնակչության երկու երրորդը կազմող ոչ ռուս ազգությունների ժողովուրդների նկատմամբ։ Այդ ժողովուրդները Հոկտեմբերյան հեղափոխությունից ստացան լիակատար ազատություն, դարձան իրավահավասար, կանգնեցին պետական-քաղաքական և տնտեսական-կուլտուրական զարգացման նոր, սովետական ուղու վրա։

* * *

Սովետական պետությունն իր ստեղծման առաջին օրվանից ազգային քաղաքականությունը դիտեց որպես երկրում կառավարած սոցիալ-քաղաքական արմատական փոփոխությունների անկյունաքարերից մեկը։ Նոյեմբերի 26-ին ձևավորված սովետական կառավարության կազմում հիմնվեց Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատ, որը լայն գործունեություն ծավալեց սովետական իշխանության ազգային քաղաքականությունը մշակելու և իրագործելու համար։ Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատը հանդիսացավ ազգային քաղաքականության կիրառման պետական-կազմակերպական կարևոր լծակը։

Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատը հանդիսանում էր ժողովրդական կոմիսարների սովետի անբաժան մասը, նրա օրգանը։ Այդ կոմիսարիատի գործունեությունը չի կարելի պատկերացնել Լենինի գլխավորած ժողկոմսովետի գործունեությունից մեկուսացված։

---

[8] См. ЦГАОР, ф. 1318, оп. 1, д. 25 и др. дела.

[9] См. «Известия ВЦИК» от 19 июня 1918.

Ազգությունների գործերի կոմիսարիատը կազմված էր ժողովրդական կոմիսարից (կոմիսար Ի. Վ. Ստալին), կոլեգիայից, ազգությունների գործերի կոմիսարներից կամ բաժիններից։ Ի տարբերություն մյուս կոմիսարների, որոնց կոլեգիաների անդամները նշանակվում էին անհատապես, ազգությունների գործերի ժողկոմատի կոլեգիան կազմվում էր ազգությունների գործերի կոմիսարներից և բաժինների վարիչներից՝ ներկայացուցչական կարգով[10]։ Բոլոր ազգերի գործերի կոմիսարները և բաժինների վարիչները ի պաշտոնե մտնում էին ժողովրդական կոմիսարիատի կոլեգիայի մեջ, որտեղ նախապատրաստվում էին այս կամ այն ժողովրդին վերաբերվող կարևորագույն ակտերը, դեկրետները, որոշումները և դրանք ներկայացվում Ժողկոմսովետի հաստատմանը։ Սահմանվել էր կարգ, որի համաձայն, Ժողկոմսովետի նիստերում որևէ երկրի կամ ազգի մասին դեկրետները և որոշումներն ընդունվում էին տվյալ ազգային գործերի կոմիսարի պարտադիր մասնակցությամբ։

1917 թ. վերջերին և 1918 թ. առաջին կեսի ընթացքում Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատին կից կազմակերպվեցին առանձին ազգությունների գործերի կոմիսարիատներ կամ բաժիններ, ընտրվեցին նրանց աշխատողները և ծավալվեց գործունեությունը։ Կազմակերպվեց Հայկական ազգային գործերի կոմիսարիատ՝ կոմիսար Սուրեն Մարտիրոսյան (Վ. Ավանեսով), Լիտվական ազգային գործերի կոմիսարիատ՝ կոմիսար Միցկևիչ-Կապսուկաս, Լատվիական ազգային գործերի կոմիսարիատ՝ կոմիսար Ֆրիդրիխ Ռոզին (Ազին), Լեհական ազգային գործերի կոմիսարիատ՝ կոմիսար Յուլիան Լեշչինսկի, Հրեական ազգային գործերի կոմիսարիատ՝ կոմիսար Սեմիոն Դիմանշտեյն, Թուրքստանի մուսուլմանների ազգային գործերի կոմիսարիատ՝ կոմիսար Մուլլա Նուր Վախիտով, Բելոռուսական ազգային գործերի կոմիսարիատ՝ կոմիսար Դմիտրի Ժիլունովիչ։ Նույն ժամանակամիջոցում կազմակերպվեցին բաժիններ առանձին ազգությունների գործերով զբաղվելու համար. ուկրաինական բաժին՝ վարիչ Եֆիմ Պետրենկո, էստոնական բաժին՝ վարիչ Հանս Պեգելման, կիրգիզական բաժին՝ վարիչ Մահմեդ Տուրգարին, չեխոսլովակյան բաժին՝ վարիչ Արնո Գաիս, կալմիկական բաժին՝ վարիչ Զուդրան, Կովկասի լեռնականների բաժին՝ վարիչ Օմար Բեգ-Ալիև, չուվաշական բաժին՝ վարիչ Դանիել Էլմին, մարիական բաժին՝ վարիչ Ն. Ալեքսեև, Մերձավոր արևելքի մուսուլմանների բաժին՝ վարիչ Նարիման Նարիմանով, վոտիական բաժին՝ վարիչ Մ. Պրոտոպին, հարավային սլավոնների բաժին՝ վարիչ Վ. Մարգովիչ։ Հետագայում կոմիսարիատները կամ բաժինները ենթարկվում էին փոփոխությունների, ըստ անհրաժեշտության՝ ստեղծվում էին նորերը կամ վերացվում եղածները։

Ազգային գործերի կոմիսարիատներն ունեին իրենց կոլեգիաները և ենթաբաժինները, կոմիսարիատներից շատերը հիմնեցին իրենց պարբերական օրգանները և հրատարակչությունը։

Ազգությունների գործերի կոմիսարիատը հատուկ կանոնադրություն մշակեց նահանգական և մարզային սովետներին կից ազգային գործերի գծով բաժիններ և սեկցիաներ ստեղծելու մասին։ Կանոնադրության մեջ ասված է. «ՌՍՖՍՀ այն վայրերում, որոնք ունեն բնակչության բազմազան ազգային կազմ, դեպուտատների սովետներին կից կազմակերպվում են ազգություննե-

[10] См. ЦГАОР, ф. 1318, оп. 1, д. 1, л. 1.

րի գործերի բաժիններ»[11]։ Այդ բաժինները հաշվի առնելով տվյալ նահանգում կամ մարզում, կամ գավառներում ապրող ազգությունները, դրանց համար ստեղծում են ազգային սեկցիաներ։ Կանոնադրության 5-րդ հոդվածը սահմանել է բաժինների գործունեության խնդիրները. «ա) սովետական իշխանության սկզբունքները կիրառել համապատասխան ազգության մեջ նրա մայրենի լեզվով. բ) կյանքում իրագործել ազգությունների գործերի ժողկոմատի բոլոր որոշումները. գ) բոլոր միջոցները ձեռք առնել բարձրացնելու տվյալ տերիտորիայում բնակվող ազգերի աշխատավորական մասսաների կուլտուրական մակարդակը և դասակարգային գիտակցությունը. դ) պայքար մղել հակահեղափոխության և նրա ազգային դրսևորումների դեմ»[12]։ Այդ բաժիններում ստեղծվեցին կոլեգիաներ, որոնք թեև գործում էին տեղական գործկոմների կազմում և ենթարկվում նրանց, սակայն համարվում էին ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատի տեղական օրգաններ։ Գործկոմի հետ տարաձայնություններ առաջ գալու դեպքում հարցերը փոխադրվում էին ազգությունների գործերի ժողկոմատում քննելու և լուծելու։

Այսպիսով, Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատում, նրան կից ազգային կոմիսարիատներում ու բաժիններում, ինչպես նաև նահանգների ու մարզերի սովետների ազգային գործերի բաժիններում աշխատանքի էին ներգրավվել բազմազգ ժողովուրդների կյանքին լավատեղյակ բազմաթիվ աշխատողներ։ Ազգային գործերի բաժինների մասին մի հրահանգի մեջ ասված է, որ ազգությունների գործերը վարելու համար պետք է ընտրել փորձված ընկերների, ՌԿԿ անդամներից, որոնք կարողանան իրենց գործունեությունը հմտորեն զուգակցել ՌԿԿ-ի կոմիտեների և սովետի մյուս բաժինների աշխատանքի հետ, կարողանան տվյալ շրջանում ապրող ազգության անկուսակցական լայն մասսաներին կանգնեցնել սովետական իշխանության ուղու վրա։ Այդ սկզբունքը կիրառվում էր վերևից, ժողկոմատից սկսած, մինչև ստորին օղակները, մարզային ու գավառային բաժինները։

Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատը ամբողջ հինգ տարի անդուլ աշխատանք էր կատարում կուսակցության և կառավարության ազգային քաղաքականությունն իրագործելու ուղղությամբ։

* * *

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո Սովետական Ռուսաստանի կառավարությունը ձեռնարկեց երկրի բնակչության ազգային-էթնիկական կազմի ուսումնասիրումը՝ ազգային քաղաքականությունը գիտական հիմունքների վրա դնելու նպատակով։ Ստեղծվեց բնակչության ցեղային և ազգային կազմն ուսումնասիրող հատուկ հանձնաժողով, որի կազմի մեջ ներգրավվեցին ականավոր գիտնականներ, ակադեմիկոս Վերնադսկին, Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Բարտոլդը, Պետրոգրադի համալսարանի պրոֆեսորներ Ագոնցը, Մառը, Օրբելին, ակադեմիկոս Շախմատովը և ուրիշներ։ Հանձնաժողովի կազմի մեջ ձևավորվեցին 9 սեկցիաներ, որոնցից յուրաքանչյուրը մեկնեց երկրի մեկ ազգային շրջան (Կովկաս, Մերձբալթիկա, Միջին

[11] См. газ. «Жизнь национальностей», № 6, 15 дек. 1918.
[12] ЦГАОР, ф. 1318, оп. 1, д. 1, л. 77.

Ասիա, Սիբիր և այլն)։ Այդ հանձնաժողովի հաշվետվություններից երևում են Ռուսաստանի ժողովուրդների ազգային և ցեղային խայտաբղետ կազմը, ըստ նահանգների և երկրամասերի նրանց բնակությունը, տնտեսական և կուլտուրական զարգացման աստիճանը, լեզուների հարցերը, ազգային փոխհարաբերությունները։

Սովետական Ռուսաստանի կառավարությունը մեծ հոգատարությամբ և մանրակրկիտ քննում էր այդ նյութերը, խորանում երկրի բնակչության ազգային կազմի և նրանից հետևող հարցերի մեջ, ընդունում համապատասխան դիրեկտիվներ և որոշումներ։ Լենինը 1917 թ. նոյեմբերին նորից ու նորից անդրադառնում է այդ խնդրին, նշում «ազգությունների առանձնապես խայտաբղետ կազմը Ռուսաստանում», հիշեցնում է, որ Կերենսկին բնակչության մեծամասնությունը կազմող ոչ ռուս ժողովուրդներին բռնությամբ պահում էր հպատակության տակ, արժանանալով նրանց ատելությանը։ Ռուսաստանի բանվորա-գյուղացիական կառավարությունը՝ ի հակադրություն հին Ռուսաստանի կառավարողների՝ ցարի և Կերենսկու, առաջադրեց և իրագործեց ճնշված ազգերի իրավահավասարության, նրանց ինքնորոշման և ինքնուրույն ազգային սովետական պետություններ ստեղծելու քաղաքականություն։ Դնելով ազգերի ազատ ինքնուրույն պետություններ ստեղծելու հարցը, Լենինը կտրականապես առարկում էր ոմանց այն տարակուսանքներին, թե Ռուսաստանը բաժան-բաժան կլինի, կտրոհվի առանձին, փոքր հանրապետությունների։ «Մենք դրանից վախենալու բան չունենք,— ասում էր Լենինը,— որքան էլ որ ինքնուրույն հանրապետություններ լինեն, մենք դրանից չենք սարսափի»[13]։ Այնուհետև Լենինը հաստատակամ ու վճռական հայտարարում էր. «մենք պետք է ոչնչացնենք այն հին, արյունալի ու կեղտոտ անցյալը, երբ կապիտալիստ-կեղեքիչների Ռուսաստանը մյուս ազգերի նկատմամբ դահճի դեր էր կատարում։ Այդ անցյալը մենք կոչնչացնենք, մենք այդ անցյալից քարը քարի վրա չենք թողնի»[14]։

Այդպես էլ եղավ։ Լենինի գլխավորած ժողովրդական կոմիսարների սովետը իր գործունեության առաջին օրերից սկսեց կիրառել ամենաարմատական հեղափոխական քաղաքականություն, ինչպես երկրի սոցիալական արմատական փոփոխությունների, այնպես էլ ազգային հարաբերությունների բնագավառներում։

Ազգերի ազատագրման և ինքնուրույն հանրապետություններ կազմելու մասին Լենինի հռչակած սկզբունքներն առավել ցայտուն կերպով դրսևորվեցին հեղափոխության հաղթանակի առաջին ամիսներում, 1917 թ. նոյեմբեր-դեկտեմբերին Ուկրաինայի և Հայաստանի նկատմամբ։

Հոկտեմբերյան հեղաշրջումից անմիջապես հետո Լենինը կուսակցության Կենտկոմի և ժողկոմսովետի առջև ամբողջ սրությամբ դրեց Ուկրաինական ժողովրդի ինքնորոշումն իրագործելու, ուկրաինական անկախ ժողովրդական պետություն կազմակերպելու հարցը։ 1917 թ. նոյեմբերի 22-ին արտասանած ճառի մեջ Լենինը ընդգծեց ուկրաինական ժողովրդի լիակատար ազատագրման, ուկրաինական հանրապետություն ստեղծելու անհրաժեշտությունը[15]։

---

13 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 420 (ռուս. 310)։

14 Газ. «Известия ВЦИК» от 25 ноября 1917 (ռուս. հատ. 26, էջ 310)։

15 См. В. И. Ленин, Полн. собр. соч., т. 35, стр. 116.

Ուկրաինայում այդ ժամանակ ստեղծվել էր յուրահատուկ իրադրություն. Խարկովում և մի շարք ուրիշ քաղաքներում սովետներն իրենց ձեռքն էին վերցրել իշխանությունը։ Մինչդեռ Կիևում դեռևս գործում էր Ուկրաինական բուրժուական Ռադան, որը օգնում էր Կալեդինին՝ արշավի գնալու սովետական Ռուսաստանի դեմ, դինաթափում էր հեղափոխական զորքերին և կարմիր գվարդիային, ձգտում էր ջախջախել Ուկրաինայում հաղթանակ տարած բանվորների և զինվորների դեպուտատների սովետները։ Ուկրաինական ժողովրդի ազգային և սոցիալական ազատագրական պայքարի վճռական, բախտորոշող ժամանակ էր դա։ Կամ ուկրաինական բանվորա-գյուղացիական սովետների հաղթանակ և ուկրաինական սովետական հանրապետություն, կամ Ռադայի Կալեդինի հաղթանակ, դարձյալ ռուսական իմպերիալիստական բուրժուազիայի տիրապետություն Ուկրաինայում, այդպես էր դրված հարցը։

1917 թ. դեկտեմբերի 3-ին Լենինը գրեց «Մանիֆեստ ուկրաինական ժողովրդին...» պատմական փաստաթուղթը, որն ընդունվեց Ժողկոմսովետի կողմից, տարածվեց Ուկրաինայում և ամբողջ երկրում։ Մանիֆեստի մեջ Ռուսաստանի Ժողովրդական կոմիսարների սովետը «կրկին անգամ հաստատեց ինքնորոշման իրավունքը բոլոր ազգերի համար», որը հռչակվել էր սովետների համառուսաստանյան երկրորդ համագումարում։ Այդ որոշման հիման վրա էլ կառավարությունը ավելի որոշակի դրեց Ուկրաինական Սովետական Հանրապետություն ստեղծելու, այն ճանաչելու, նրա հետ դաշնակցային հարաբերություններ հաստատելու իր պատրաստակամությունը։ «Մենք՝ Ժողովրդական կոմիսարների սովետը, ճանաչում ենք Ուկրաինական ժողովրդական հանրապետությունը, ճանաչում ենք Ռուսաստանից լիակատար անջատման կամ Ռուսաստանի հանրապետության հետ պայմանագիր կնքելու նրա իրավունքը, ֆեդերատիվ և այլ կարգի փոխհարաբերությունների մեջ լինելու վերաբերյալ»[16]։ Այսպիսով, Սովետական Ռուսաստանի կառավարությունը մի հարվածով ջնջեց այն ամբողջ վելիկոռուսական, տիրակալական քաղաքականությունը, որ դարերի ընթացքում կիրառվել էր ուկրաինական ժողովրդի նկատմամբ, առաջարկեց ուկրաինական հանրապետություն ստեղծելու խնդիրը և այն պաշտոնապես ճանաչելը, որպես իրավահավասար հանրապետություն, որոնց միջև կարող էին հաստատվել դաշնագրային հարաբերություններ։ Ժողկոմսովետի հռչակած սկզբունքները նախանշեցին ուկրաինական ազգի պետականություն ստեղծելու և զարգացնելու պատմական խնդիրը։ «Այն ամենը, ինչ վերաբերում է ուկրաինական ժողովրդի ազգային իրավունքներին և ազգային անկախությանը, ճանաչվում է մեր, Ժողովրդական կոմիսարների սովետի կողմից, իսկույն ևեթ, առանց սահմանափակումների և անպայման»[17]։

Ռուսաստանի Ժողկոմսովետը, Համառուսաստանյան Կենտգործկոմը և բոլշևիկների կուսակցության Կենտկոմը, Պետրոգրադի բանվորների և զինվորների դեպուտատների սովետը 1917 թ. դեկտեմբերի 8-ին դիմում-կոչ ուղղեցին Ուկրաինայի բանվորներին, զինվորներին և գյուղացիներին. ամբողջ ուկրաինական ժողովրդին, բացատրելով ստեղծված իրադրությունը և Ուկրաինական հանրապետություն ստեղծելու համար ծավալվող պայքարի խնդիրները[18]։

---

[16] В. И. Ленин, ПСС, т. 35, стр. 143.

[17] Там же, (Հայկ. հատ. 26, էջ 439)։

[18] См. Большевистские организации Украины (ноябрь 1917—апрель 1918 гг.). Сб. документов, стр. 7—9, Киев, 1962.

Կոչի մեջ բացահայտվեցին ուկրաինական անկախ սովետական հանրապետություն կազմակերպելու գործի հակառակորդների մեքենայությունները, Կերենսկու տապալված մինիստրների և Ուկրաինական բուրժուական Ռադայի պարագլուխների գործարքը, Պետլյուրայի և Կալեդինի հակահեղափոխական բանդաների հակասովետական գործողությունները։ «Ուկրաինացի եղբայրներ,— ասված է կոչի մեջ,— Ձեզ հավաստիացնում են, իբր թե մենք դեմ ենք Ուկրաինայի ինքնորոշմանը։ Դա կեղծիք է։ Մենք ոչ մի բոպե անգամ չենք մտածում Ուկրաինայի իրավունքները բռնանալու մասին։ Հեղափոխական պրոլետարիատն է միայն շահագրգռված, որպեսզի ազգերի համար ապահովվի իրավունք ինքնորոշվելու, ընդհուպ մինչև անջատումը...»[19]։ Ժողկոմսովետը և Կենտկոմը կոչ արեցին Ուկրաինայի բանվորներին, գյուղացիներին և զինվորներին վերակազմել Ռադան, ամբողջ երկրում հաստատել սովետական իշխանություն, ստեղծել Ուկրաինական Սովետական Հանրապետություն։

Ուկրաինայի բոլշևիկները ելնելով ազգային հարցի լենինյան դիրքորոշումից, պայքար էին ծավալում ուկրաինական սովետների համագումար հրավիրելու և Ուկրաինական սովետական հանրապետություն ստեղծելու համար։ 1917 թ. դեկտեմբերի 11/12 (24—25)-ին Խարկով քաղաքում տեղի ունեցավ սովետների համաուկրաինական առաջին համագումարը, որն արտահայտեց իր միահամուռ համերաշխությունը Սովետական Ռուսաստանի Ժողկոմսովետի հռչակած ազգային քաղաքականության հետ։ Համագումարը ընդունեց որոշում ամբողջ Ուկրաինայի տերիտորիայում սովետական իշխանություն հայտարարելու մասին. «Ուկրաինան հայտարարվում է բանվորների, գյուղացիների և զինվորների դեպուտատների սովետների հանրապետություն»[20]։ Համագումարը, այնուհետև, առանձին որոշում ընդունեց «Ուկրաինայի ինքնորոշման մասին»։ Ուկրաինական Սովետական Հանրապետությունը Ռուսաստանի Սովետական Հանրապետության հետ կապվեց ֆեդերատիվ հիմունքներով։ Ընտրվեց Ուկրաինական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Կենտգործկոմ, որը դեկտեմբերի 17-ին (30-ին) ձևավորեց Ուկրաինական ՍՍՀ-ի առաջին կառավարությունը։ Ուկրաինական առաջին կառավարության կազմում ընտրվեցին՝ Ֆ. Ա. Սերգեևը (Արտյոմ), Ն. Ա. Սկրիպնիկը, Ե. Բ. Բոշը, Վ. Պ. Զադոնսկին։ Կառավարության նախագահ հաստատվեց Ն. Ս. Սկրիպնիկը։ Ուկրաինայի սովետների համագումարը Կիևում հաստատված բուրժուական Ռադան հայտարարեց օրենքից դուրս։

Ռուսաստանի Ժողովրդական կոմիսարների սովետը ողջույնի հեռագիր ուղարկեց Ուկրաինայի սովետական կառավարությանը, խոստացավ ամեն տեսակի լիակատար օգնություն ցույց տալ ուկրաինական «եղբայրական հանրապետության» կառավարությանը[21]։ Սովետների համառուսաստանյան երրորդ համագումարում ունեցած ելույթի մեջ Լենինը կրկին ողջունեց Ուկրաինական ժողովրդական հանրապետության ստեղծումը և հայտարարեց, որ ոչ մի տարակուսանք չի կարող լինել Ուկրաինական ժողովրդական հանրապետության հաղթանակի նկատմամբ՝ բուրժուական Ռադայի դեմ մղվող պայքա-

---

19 Նույն տեղում (տե՛ս էջ 13)։

20 «Великая Октябрьская социалистическая революция на Украине», т. 2, стр. 574.

21 Там же, стр. 594.

ըում[22]։ Սովետների համառուսաստանյան երրորդ համագումարը լիովին հավանություն տվեց ուկրաինական անկախ սովետական հանրապետություն ըստեղծելու պատմական ակտին։

Այսպիսով, Ուկրաինայի ինքնորոշման, ուկրաինական ազգային պետականության ստեղծման, ուկրաինական ժողովրդի բազմամիլիոն մասսաների ազգային և սոցիալական գործի համար իսկական մարտնչողը և այն հաղթանակի հասցնողը հանդիսացավ Լենինը, լենինյան կուսակցությունը։ Բոլշևիզմը հանդես եկավ ուկրաինական ազգի ազատագրման ծրագրով և այն իրագործեց սոցիալիստական վերափոխումների միջոցով։

Լենինը 1918 թ. ասում էր. «Բոլշևիզմը Ուկրաինայում դարձավ յուրահատուկ ազգային շարժում»[23]։

Այդ յուրահատուկ ազգային շարժումը միասնաբար լուծում էր ազգային և սոցիալական հարցերը։ Ուկրաինայում բոլշևիկների ղեկավարած սովետական հեղափոխությունը լուծեց աշխատավորներին սոցիալական ճնշումից ազատագրելու խնդիրը, այն միաժամանակ լուծեց ուկրաինական ժողովրդի ազգային-ազատագրման խնդիրը, հասցրեց ուկրաինական ազգային պետականության ստեղծմանը։

* * *

Ազգերի ազատագրման և նրանց պետականության ստեղծման կոնկրետ օրինակներից մեկն էլ Լենինի մշակած ծրագիրն ու Ժողկոմսովետի հռչակած քաղաքականությունն էր Հայաստանի նկատմամբ։ Հայտնի է, որ Հայաստանը վաղուց մասնատված էր երկու մասի, որոնցից Արևմտյան Հայաստանը գտնվում էր Թուրքական, իսկ Արևելյան Հայաստանը՝ ռուսական պետությունների հպատակության տակ։

1914 թ. հունվարի 26-ին դիվանագիտական երկար պայքարից հետո Ռուսաստանի և Թուրքիայի միջև ստորագրվեց համաձայնագիր՝ հայկական նահանգներում բարեփոխություններ կատարելու մասին։ Այդ համաձայնագրով Արևմտյան Հայաստանի (կամ ինչպես երբեմն գրականության մեջ հանդիպում ենք «Թուրքահայաստանի») Վանի, Բիթլիսի, Տիգրանակերտի, Էրզրումի, Խարբերդի և Սեբաստիայի նահանգները, ինչպես նաև Տրապիզոնի մարզը պետք է կառավարվեին Ռուսաստանի և եվրոպական պետությունների նշանակած գլխավոր-տեսուչների կողմից, որոնք հաշվետու էին միայն եվրոպական պետությունների առաջ։ Գլխավոր տեսուչները նոր էին ժամանել Հայաստան, երբ բռնկվեց համաշխարհային պատերազմը։ Թուրքական իշխանությունները այդ տեսուչներին վտարեցին երկրից, իսկ 1915—1916 թթ. իրագործեցին հայ բնակչության մասսայական տեղահանումը և ջարդը։ Կոտորվեց ավելի քան մեկկես միլիոն հայ բնակչություն, ավելի քան մեկ միլիոն մարդ էլ բռնագաղթի ենթարկվեց, արտաքսվեց Հայաստանից, ուղարկվեց Թուրքիայի ներքին նահանգները կամ ցրիվ տրվեց օտար երկրները։

Պատերազմի ժամանակ ռուսական բանակը գրավեց Արևմտյան Հայաստանի մի մասը՝ Վանի, Բիթլիսի, Էրզրումի նահանգները, ինչպես նաև Տրա-

---

22 См. В. И. Ленин об Украине, стр. 467.

23 См. Новые документы Ленина, «Вопросы истории КПСС», № 2, 1962.

պիզոնի նահանգը։ Կերենսկու ժամանակավոր կառավարությունն այդ նահանգները հայտարարեց «Թուրքահայաստանի նահանգապետություն» և նշանակեց գլխավոր կոմիսար այդ երկրամասի կառավարման համար։ Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ Հայաստանի այդ նահանգները գտնվում էին ռուսական բանակի իշխանության տակ։

1917 թ. հունիսի 9-ին համառուսաստանյան սովետների առաջին համագումարում Լենինը անդրադարձավ Հայաստանի հարցին, քննադատեց Հայաստանում կռվող պետությունների նվաճողական քաղաքականությունը, դրան հակադրելով բոլշևիկների կուսակցության ծրագիրը, որը պահանջում էր «Հայաստանը դարձնել անկախ հայկական հանրապետություն»[24]։

Հոկտեմբերյան հեղափոխության նախօրյակին Լենինը կրկին անդրադառնում է այդ հարցին, հայտարարում, որ մենք պարտավորվում ենք, իշխանության գլուխ գալով, ապահովել Ռուսաստանում ապրող այլացեղերի լիակատար ազատություն և անկախություն, կիրառելով այդ իրավունքն «ամբողջ Հայաստանի նկատմամբ»[25]։

Կարելի է բերել նաև Լենինի ուրիշ ասույթներ այն մասին, որ բոլշևիկները 1917 թ. մշակելով հեղափոխության քաղաքական խնդիրները, քանիցս ընդգծել էին Հայաստանի երկու հատվածների կամ ամբողջ Հայաստանի ազատագրման, հայ ժողովրդի վերամիավորման և հայկական պետականության ստեղծման ծրագիրը։

Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո, Լենինի գլխավորած ժողովրդական կոմիսարների սովետը հաշտության և հողի մասին մեծ հրովարտակների հետ միասին, ազդարարեց ճնշված ազգերի ազատագրման և անկախության իրավունքը, որպես անխախտ սկզբունք, որպես ազգային քաղաքականության գլխավոր գիծ։ Այդ գլխավոր գիծը կոնկրետացվեց Ուկրաինայի և Հայաստանի հարցում։

Ժողովրդական կոմիսարների սովետը ստեղծեց հատուկ հանձնաժողով, որին հանձնարարվեց լավ նախապատրաստել Հայաստանի ինքնորոշման և հայկական ազգային պետականության ստեղծման հարցը։ Սովետական կառավարության կենտրոնական ապարատում, Ազգությունների գործերի կոմիսարիատին կից գործող Հայկական գործերի կոմիսարիատը, որի գլուխ կանգնած էին Սուրեն Մարտիրոսյանը (հայտնի է նաև Վառլամ Ավանեսով հեղափոխական ծածկանունով) և նշանավոր բանաստեղծ Վահան Տերյանը, կազմեց հատուկ զեկուցագիր Հայաստանի վիճակի մասին, որի մեջ համառոտակի շարադրված են արևմտահայության պատմության հիմնական կողմերը և Հայաստանի արևմտյան նահանգների վիճակի բնութագիրը։ Այդ փաստաթուղթը ներկայացվեց Լենինին և սովետական կառավարության մյուս ղեկավարներին։

Հայաստանի անկախության հարցի իրավական ձևակերպման ակտի նախապատրաստման գործում ներգրավվեցին Ավանեսովից և Տերյանից բացի, նաև Ռոստոմ Զորյանը և Պոռշ Պոռշյանը։ Լենինը զրույցներ է ունենում նրանց

---

24 «Պրավդա» թերթի 1917 թ. հուլիսի 2-ի համարը, կամ Լ ե ն ի ն, երկեր, հ. 25, էջ 37։

25 «Ռարոչի պուտ» թերթի 1917 թ. հոկտեմբերի 19-ի համարը, կամ Լ ե ն ի ն, երկեր, հ. 26, էջ 58։

հետ այդ խնդրի առավել ռեալ և նպաստավոր լուծման շուրջը։ Այդ զրույցներից մեկի մասին այն ժամանակ Վահան Տերյանը գրել է.

«Լենինը հարցրեց՝ ի՞նչ են ուզում հայերը։ Ուզո՞ւմ են ջոկվել Ռուսիայից, թե՞ ուզում են միանալ։ Ասացի, որ ռուսահայերը չեն ուզում ջոկվել, իսկ տաճկահայերը ուզում են անկախ լինել։ Ինչպե՞ս ուրեմն, երկու՞ մաս լինել, հարցրեց Լենինը...»[26]։

Լենինի համար տարօրինակ է թվացել, որ հայկական պատվիրակները կամենում են, որպեսզի երկիրը դարձյալ մասնատված մնա և ոչ թե միասնական։ Մինչդեռ ազգային հարցի լենինյան դիրքորոշումից բխում էր Արևմտյան Հայաստանի և Արևելյան Հայաստանի նահանգների միասնական ինքնորոշում, միասնական հայկական պետության կազմավորման հիմունքների հաստատում։

Այդ հարցն առաջին անգամ դրվեց Ժողկոմսովետի նիստում՝ 1917 թ. դեկտեմբերի 20-ին, սակայն վերջնական որոշում չի կայացվում։ Դեկտեմբերի 23-ին Ժողկոմսովետի նիստը նորից է քննում Հայաստանի ինքնորոշման հարցը։ Այդ քննարկումների ընթացքում Լենինը պաշտպանում էր իր սկզբունքը՝ ամբողջ Հայաստանի ինքնորոշում. օտար պետությունների միջամտության արգելում հայկական գործերի մեջ։ Այդ նկատառումով էլ Ժողկոմսովետի քննարկմանը ներկայացված որոշման նախագիծը կոչվում է «Դեկրետ Հայաստանի մասին»[27]։

1917 թ. դեկտեմբերի 29-ին Ժողկոմսովետը, Լենինի նախագահությամբ, երրորդ անգամ քննեց Հայաստանի ինքնորոշման հարցը և ընդունեց «Թուրքահայաստանի մասին» դեկրետը։ Այդ դեկրետով Ժողովրդական կոմիսարների սովետը հռչակեց Արևմտյան Հայաստանի ազատ ինքնորոշման և անկախ հայկական հանրապետություն ստեղծելու սկզբունքները։ Ժողկոմսովետի դեկրետով նախատեսվեց տարբեր երկրներում ցրված գաղթական-հայերի, ինչպես նաև վտարանդի հայերի անարգել վերադարձը Արևմտյան Հայաստանի սահմանները. պատերազմի ժամանակ թուրքական իշխանությունների կողմից բռնի կերպով Թուրքիայի խորքերն արտաքսված հայերի անարգել վերադարձը Արևմտյան Հայաստանի սահմանները, որի վրա Ժողովրդական կոմիսարների սովետը պետք է պնդեր թուրքական իշխանությունների հետ ունենալիք խաղաղ բանակցությունների ժամանակ. Արևմտյան Հայաստանի ժամանակավոր ժողովրդական կառավարչության կազմակերպումը՝ դեմոկրատական հիմունքներով ընտրված հայ ժողովրդի դեպուտատների սովետի ձևով[28]։ Սովետների 3-րդ համառուսաստանյան համագումարը հավանություն տվեց Հայաստանի նկատմամբ Ժողկոմսովետի հռչակած քաղաքականությանը։

Այսպիսով, Լենինի նախաձեռնությամբ, 1917 թ. դեկտեմբերին հռչակվեցին Ուկրաինական և ապա Հայկական ժողովրդական կամ սովետական հանրապետությունները։ 1918 թ. սկզբներից կայզերական Գերմանիան օկուպացրեց Ուկրաինայի մեծ մասը, սակայն Ուկրաինական հանրապետության ղեկավար օրգանները փոխադրվեցին սովետական շրջանները և շարունակեցին գործունեությունը մինչև օկուպանտների վտարումն Ուկրաինայից, որից հետո

26 Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 409—410։

27 Տե՛ս Կենտրոնական կուս. արխիվում՝ Ժողկոմսովետի համապատասխան նիստի արձանագրությունը։

28 Տե՛ս «Պրավդա» թերթը, 31 դեկտ. 1917 թ.։

վերադարձան Ուկրաինա և ձեռնամուխ եղան Ուկրաինական սովետական պետության կառուցման գործին։

* *

Այլ ընթացք ունեցավ Հայաստանի բախտը։ 1918 թ. սկզբներին թուրքական զորքերը ոչ միայն չհեռացան Արևմտյան Հայաստանի նահանգներից, որտեղ նրանք գտնվում էին, այլև ներխուժեցին այն նահանգները, որտեղից հեռացել էին ռուսական զորքերը, ինչպես նաև գավթեցին Արևելյան Հայաստանի մեծ մասը։ Թուրքական իմպերիալիստները արգելակեցին արևմտահայ բնակչությանը՝ վերադառնալու իր հայրենիքը և իրագործելու լենինյան դեկրետով հայ ժողովրդին տրված իրավունքները, ստեղծելու Հայկական անկախ հանրապետություն, հայ ժողովրդի դեպուտատների սովետի իշխանություն։

Երկուսկես, մոտ երեք տարի Հայաստանը ընկավ օտար զավթիչների լծի տակ, որոնց հետ գործակցող դաշնակցությունը նոր վերքեր առաջ բերեց հայ ժողովրդի օրգանիզմի վրա։ Բայց այդ դժնդակ պայմաններում հայ աշխատավորությունը չկորցրեց հավատը և հույսը։ Նա իր բախտը սերտորեն կապեց Հոկտեմբերի հաղթանակով կյանքի կոչված նոր, Սովետական Ռուսաստանի հետ, նրա կառավարության հետ, նրա ղեկավար ուժի՝ կոմունիստական կուսակցության հետ։

Հայ աշխատավորության լայն զանգվածները, որ 1917—1920 թթ. ապաստան էին գտել Սովետական Ռուսաստանում, կանգնեցին սովետների կողմը, իսկ բուն Հայաստանում ապրող ժողովուրդը համառորեն շարունակեց պայքարը Հայաստանի նկատմամբ Հոկտեմբերյան հեղափոխության հռչակած ծրագիրը կենսագործելու համար։ Մանր պայքար էր դա, լի հերոսականությամբ, պարտություններով և հաղթանակներով։ Էրզրումի և Երզնկայի, Սարդարապատի և Բաշապարանի, Ղարաքիլիսայի և Գողթան-Արևիկի շրջաններում, ինչպես նաև Բաքվում հայկական զորամասերի մարտերը ցույց տվին, որ հայ ազգային-ազատագրական պայքարի տասնյակ հազարավոր մարտիկներ միաձուլվեցին Հոկտեմբերի բանակների հետ։ Մայիսյան հերոսական ապստամբությունը ցույց տվեց, որ հայ աշխատավորությունը գնում է անձնազոհ կռվի՝ հանուն սովետական իշխանության հաստատման, որի մեջ է տեսնում երկրում ստեղծված ճգնաժամից դուրս գալու միակ ելքը։ Այդպիսի ընդհանուր պատկեր ուներ հայ ժողովրդի այն հատվածի պայքարը, որը մղվում էր բուն Հայաստանում։

Սակայն հայ ժողովրդի մեծ զանգվածները, նրա կեսից ավելին գտնվում էին Հայաստանից դուրս՝ Կովկասի և Ռուսաստանի սովետական շրջաններում, որտեղ ամենաակտիվ մասնակցություն ունեցան Հոկտեմբերի հաղթանակի և սովետական կարգերի ամրապնդման մեծ պայքարին։ Վերհիշենք այդ պայքարի գլխավոր արտահայտությունները։

Հայ ժողովրդի հեղափոխական զավակներից շատերին կարելի էր տեսնել Պետրոգրադի և Մոսկվայի Հոկտեմբերյան բարիկադների վրա, Ձմեռային պալատը և Կրեմլը գրոհողների շարքերում, ռազմա-հեղափոխական կոմիտեների ղեկավարների մեջ և սովետական իշխանության առաջին ընտրովի օրգանների կազմում։ Հեղափոխության հաղթանակից հետո, երբ սկսվեց սովետական իշխանության պաշտպանության երեք տարի տևած հերոսամարտը

(1918—1920 թթ.), հայ ժողովրդի զավակները աչքի ընկնող սխրագործություններ կատարեցին բոլոր ռազմաճակատներում, կարմիր բանակի կազմակերպողների և մարտի տանող զորավարների ու կոմիսարների շարքերում։ Հիշատակենք Ալ. Մյասնիկյանին, որը կուսակցական-սովետական ղեկավար պաշտոններից բացի, նաև արևմտյան ռազմաճակատի առաջին ընտրովի հրամանատարն էր, հետո Գերագույն գլխավոր հրամանատար, Մոսկվայի պաշտպանության օպերատիվ շտաբի պետ. Դասպար Ոսկանյանին, որը 25-րդ Չապաևյան դիվիզիայի հրամանատարն էր, հետո 4-րդ բանակի և ապա 12-րդ բանակի հրամանատարը. Հայկ Ժժշկյանին — Գային, երկաթյա դիվիզիայի լեգենդար հրամանատարին, հետո 2-րդ և 3-րդ հեծյալ կորպուսների հրամանատարին, 1-ին հեղափոխական բանակի հրամանատարին. Հակոբ Մելքոնյանին, Թուրքեստանյան հատուկ միավորումների հրամանատարին, բասմաչական հրոսակախմբերի ջախջախումը ղեկավարող հմուտ ռազմագետին. Գրիգոր Խաչանյանին, արևելյան և արևմտյան ռազմաճակատներում, որպես միավորման հրամանատար և կոմիսար, աչքի ընկած այդ հերոսին։ Հիշենք Գևորգ Աթարբեկյանին՝ Ձերժինսկու աշակերտին ու զինակցին, սովետական հակահետախուզության հմուտ մարտիկներից ու կազմակերպողներից մեկին և այլն։

Ականավոր հեղափոխականների և զորահրամանատարների մասին հիշատակելով, չի կարելի մոռանալ գլխավորը, մասսան։ 1918—1919 թթ. կարմիր բանակի շարքերում ծառայում էին 25.000 հայ զինվորներ։ 1918 թ. օգոստոսին ստեղծվեց Լենինի անվան հայկական գունդը։ Հայ ռազմիկների այդ զանգվածը ռուս և ուկրաինացի, լատիշ և վրացի, լիտվացի և էստոնացի ռազմիկների հետ եղբայրությամբ զոդված, երկու-երեք տարի կրեց պատերազմի արհավիրքները, շատ զոհողություններ տվեց՝ հանուն սովետական Ռուսաստանի պաշտպանության։ Հայաստանի զավակները, ինչպես և մյուս փոքր ազգերի զինվորները, կարմիր բանակի շարքերում մասնակցելով սովետական Ռուսաստանի պաշտպանությանը, քաջ կերպով գիտակցում էին, որ իրենց ժողովուրդների բախտն էլ որոշվում էր Ռուսաստանի ռազմաճակատներում։ Նրանք իրենց հաշիվ էին տալիս, որ միայն ինտերվենտներին ջախջախելով, Կոլչակի, Դենիկինի, Վրանգելի բանակներին հաղթելով և սովետական Ռուսաստանի հզորությունը կոփելով, հնարավոր կլինի օգնության հասնել ճնշված ազգերին, նրանց ազատագրել օտար նվաճողների և երկրի ներքին կեղեքիչների ասպատակություններից, իրականացնել Հոկտեմբերյան հեղափոխությամբ այդ ազգերին շնորհված մեծ իրավունքները։

Հայաստանի փորձը պերճախոս կերպով այդ է ապացուցում։ Հայ ժողովուրդը 1917 թ. վերջերին և 1918 թ. սկզբներին փորձեց իշխանությունը վերցնել իր ձեռքը և իրականացնել Ժողկոմսովետի դեկրետներով իրեն տրված իրավունքները, սակայն միայն իր ուժերով անհնարին եղավ կատարել այդ խնդիրը, պայքարն անհավասար էր, թշնամին մեծ գերակշռությամբ հաղթեց։ 1920 թ. մայիսին Հայաստանի աշխատավորները ղենքի դիմեցին ընդդեմ ազգային բուրժուազիայի տիրապետության, միայն իրենց ջլատված, անբավարար կազմակերպված ուժերով չկարողացան հասնել իշխանության և պարտություն կրեցին, տալով մեծ քանակությամբ զոհեր։ 1920 թ. աշնանը Հայաստանը ենթարկվեց Թուրքական ռազմամոլների նոր հարձակմանը։ Թուրքիան սկսեց նվաճողական, ավազակային պատերազմ, որի դեմ Հայաստանը անհավասար

ուժով էր կռվում և պարտություն կրեց։ Թուրքական զավթիչները դաժանորեն հոշոտում էին Արևելյան Հայաստանի գրաված շրջանները, արյունոտ դատաստան սարքում տարաբախտ հայ աշխատավորների նկատմամբ։ Ժողովուրդը նորից ու նորից համոզվեց, որ նա կարող է փրկվել միայն երկրում սովետական կարգեր հաստատելով, միայն Հոկտեմբերի ծնունդ սովետական Ռուսաստանի հետ եղբայրական համագործակցությամբ, նրա հզոր կարմիր բանակի կուռ բազուկի պաշտպանության ներքո։

Հոկտեմբերը եկավ Հայաստան, եկավ ազատարար կարմիր բանակը, օգնության հասավ հայ ժողովրդին։ Հայաստանի աշխատավորները երկրի կառավարման ղեկն իրենց ձեռքն առան, Հայաստանը հռչակեցին սովետական հանրապետություն։ Մնվեց հայկական սովետական պետությունը, հայ ժողովրդի ազգային վերածննդի պատվարը, որը նաև սոցիալական ազատագրություն բերեց բոլոր աշխատավորներին։ Այդպես, 1917 թ. Հոկտեմբերի դեկրետներով հռչակված Հայաստանի սովետական հանրապետության ծրագիրն իրագործվեց Արևելյան Հայաստանում, այնտեղ ընդմիշտ ծածանվեց Հոկտեմբերի գրոշը։ Այդ դրոշի ներքո իրենց սովետական հանրապետություններն ստեղծեցին նաև վրացիներն ու ադրբեջանցիները, բելոռուսներն ու մերձբալթյան ժողովուրդները, Միջին Ասիայի և Սիբիրի ազգությունները։

Հոկտեմբերը փշրեց Ռուսական կայսրության հպատակ ազգերի կապանքները, նրանց ազատագրեց ազգային և սոցիալական ճնշումներից։ Սովետական կարգերը այդ ժողովուրդների համար ապահովեցին խաղաղ և ապահով կյանք, իրավահավասարություն, տնտեսական և կուլտուրական բուռն զարգացում ու բարգավաճում։ Սովետական Հայաստանը այդ պատմական հաղթանակի լավագույն օրինակն է։

Հայ ժողովրդի վերապրող հատվածը Հոկտեմբերի գաղափարների հաղթանակի շնորհիվ ստեղծեց հայկական սովետական պետականություն, ապրեց ազգային վերածնունդ, կանգնեց աշխարհի քաղաքակիրթ ազգերի շարքը։ Այժմ, հայ ժողովուրդը Սովետական Միության եղբայրական ժողովուրդների հետ համագործակցելով, բարեկամությամբ և եղբայրությամբ տոգորված, հզոր թափով առաջ է մղում կոմունիստական շինարարությունը։

Հոկտեմբերի երկրորդ կեսդարյա պայքարում հայ ժողովուրդը կհասնի նոր, չտեսնված հաղթանակների, իրագործելով իր կոմունիստական ծրագրերը և ազգային բաղձանքները։